6134

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«06» 04 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0059-23

Ձեռնարկողը՝ ***«ԼԵՆՃԱՆՇԻՆ» ՍՊԸ***
Շիրակի մարզ, Ախուրյան համ., Չարենցի 6/4

Գործունեությունը՝ ***Շիրակի մարզի անդեզիտաբազալտների «Հացիկ-1» տեղամասում 2023-2024թթ. ընթացքում կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0059-23

<< 06 >> 04 2023թ.

Շիրակի մարզի անդեզիտաբազալտների «Հացիկ-1» տեղամասում 2023-2024թթ. ընթացքում կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս.

Ձեռնարկող՝	«ԼԵՆՃԱՆՇԻՆ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Երկրաբանական ուսումնասիրության նախնական գնահատման հայտ (Գ կատեգորիա)
Գտնվելու վայրը՝	Շիրակի մարզ, Հացիկ բնակավայր

Նախնական գնահատման հայտով /այսուհետ՝ հայտ/ նախատեսվում է 2023-2024թթ. ընթացքում կատարել Շիրակի մարզի անդեզիտաբազալտների «Հացիկ-1» տեղամասում ընդերքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ: Նախատեսվող երկրաբանական ուսումնասիրությունը կատարվելու է «ԼԵՆՃԱՆՇԻՆ» ՍՊԸ-ի ֆինանսական միջոցներով, պայմանագրային հիմունքներով:

Գործունեության իրականացման նպատակն է անդեզիտաբազալտներն ուսումնասիրել որպես բնական հումք «Խճի և կոպիճ խիտ լեռնային ապարներից շինարարական աշխատանքների համար» 8267-95 ԳՈՍՏ-ի տեխնիկական պահանջների համապատասխան: Պաշարների հաշվարկում կատարվելու է արդյունաբերական կարգերով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի, 2-րդ կետի ա. ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Համաձայն նախնական գնահատման հայտի անդեզիտաբազալտների «Հացիկ-1» տեղամասը գտնվում է Շիրակի մարզի, Ախուրյան համայնքի, Հացիկ բնակավայրի վարչական տարածքում՝ կազմում է մոտ 4 հա տարածք: Տեղամասի մոտակա բնակավայրերն են Հացիկ, Մայիսյան, Քեթի և Շիրակ գյուղերը, Գյումրի քաղաքը: Տեղամասի հեռավորությունը Գյումրի-Վանաձոր ավտոմայրուղուց գտնվում է մոտ 6կմ հեռավորության վրա: Տեղամասի բացարձակ բարձրությունը տատանվում է 1720մ-ից մինչև 1766մ:

Մոտակա ջրային ռեսուրսը՝ Շիրակի ջրանցքն է, որն անցնում է հայցվող տարածքից շուրջ 500մ հեռավորության վրա:

Տարածաշրջանով անցնում է Երևան-Թբիլիսի երկաթուղին, հայցվող տարածքից երկաթգիծը գտնվում է շուրջ 400մ հեռավորության վրա:

Շրջանի ջրային ցանցը թույլ է զարգացած: Բացի Ախուրյան գետից, որը հոսում է հանքավայրից մոտ 10կմ հեռավորության վրա, այլ գետեր չկան:

Շրջանի կլիման չոր է, բնութագրվում է մեղմ ամռանով և ցուրտ ու քամոտ ձմռեռներով: Տեղումների տարեկան միջին քանակը կազմում է 500-600մմ: Տարեկան միջին ջերմաստիճանը +4,8^{0}C -ից մինչև 7,8^{0}C աստիճան է:

Հայցվող տարածքի հողերի նպատակային նշանակությունը գյուղատնտեսական է, գործառնականը՝ արոտավայր:

Համաձայն հայտի շրջանի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են վերին կավճից մինչև չորրորդական հասկի հրաբխային, հրաբխանստվածքային և նորմալ ժամանակաշրջանների առաջացումները:

Ըստ հայտի երևակման տարածքում սողանքային երևույթներ չեն արձանագրվել: Մոտակա սողանքային մարմինները գտնվում են հանքավայրից մոտ 8.2կմ հյուսիս:

Երևակման շրջանում մեծ տարածում ունեն լեռնատափաստանային սևահողերը, անտառները գրեթե բացակայում են և տիրապետող են տարախոտա-հացազգի բույսերը: Կենդանական աշխարհը նույնպես ներկայացված է լեռնատափաստանային տեսակներով՝ աղվես, գայլ, նապաստակ, կզաքիս, զանազան կրծողներ ու թռչուններ և այլն:

Համաձայն հայտի երկրաբանական հետախուզման տարածքում բույսերի և կենդանիների կարմիր գրքերում գրանցված տեսակներ, բնության հատուկ պահպանվող տարածքներ, վտանգված էկոհամակարգեր, պատմամշակութային հուշարձաններ, անտառային տարածքներ չկան:

Համաձայն ARM WGS-84 համակարգի՝ հայցվող տարածքի /4 հա/ ծայրակետային կոորդինատներն են.

	X	Y
1	4525332,4	8403852,3
2	4525532,4	8403855,6
3	4525570,30	8404056,3
4	4525370,3	8404052,3

Համաձայն հայտի Հացիկի անդեզիտաբազալտների տեղամասում հետախուզման մեթոդիկայի ու միջոցների ընտրությունը կատարվել է հաշվի առնելով նրա երկրաբանական կառուցվածքի առանձնահատկությունները և տեղանքի ռելեֆի ձևը:

Ելնելով հետախուզման համար հատկացված տարածքի չափերից, տեղամասի հետախուզումն իրականացվելու է երկրաբանական երթուղիների, մեխանիկական սյունակային հորատանցքերի անցմամբ և նմուշարկման միջոցով: Հորատումն իրականացվելու է կարծր համաձուլվածքային և ալմաստե թագիկներով 112մմ և 93մմ տրամագծով:

Հայցվող տարածքում նախատեսվում է կատարել 1:1000 մասշտաբի տոպոգրաֆիական հանույթ 4,0հա ընդհանուր տարածքի վրա, բոլոր հետախուզական փորվածքների և բնական մերկացումների գործիքային տեղադրմամբ՝ տոպոհիմքի վրա: Փաստագրվելու է 80.0 հորատահանուկ:

Նախատեսվում է հորատել 4 հորատանցք յուրաքանչյուրը 20.0մ խորությամբ՝ ընդհանուրը 80գծմ:

Ապարների ֆիզիկոմեխանիկական հատկությունները որոշելու համար երկրաբանական փաստագրումից հետո հորոտհանուկները նմուշարկվելու են: Նմուշարկման միջակայքերի երկարությունը կազմելու է 10 մ (80 մ հորատման համար 8 նմուշ):

Օգտակար հանածոյի քիմիական կազմի և պետրոգրաֆիական ուսումնասիրության համար նախատեսվում է վերցնել հինգական նմուշ:

Հորատումը կատարվելու է ուղղաձիգ հորատանցքերով, որի համար ինչպես նաև լրացուցիչ սարքավորումների տեղադրման համար պահանջվելու է մոտ 4x8 մ հրապարակ: Հրապարակները հանդիսանալու են նաև շրջադարձի և բեռնաթափման տեղեր:

Մեկ հրապարակի համար կատարվելու է մոտ 4x8x1,0=32մ^3 հողային աշխատանքներ: Հորատման հրապարակների կառուցման համար կկատարվի 128մ^3 հողային աշխատանքներ: Հորատման աշխատանքների իրականացման համար տեղամասում նախատեսնվում է կառուցել ճանապարհներ 850 խմ ծավալով: Ընդհանուր հողային աշխատանքները կկազմի 978 մ^3:

Հողի վերին շերտի պահպանության նպատակով, ծրագրով նախատեսվում է հորատահարթակների կառուցման ժամանակ հանել հողի բերի շերտը, որը պահվելու է տեղում (այդ տեղերում արգելվելու է տեխնիկաների և մարդկանց շարժը), անմիջապես աշխատանքների (հորատում) ավարտից հետո՝ լանդշաֆտի վերականգնման նպատակով ծածկվելու է հողաշերտով: Բուսահողի պահեստավորում չի նախատեսում:

Համաձայն հայտի ռեկուլտիվացիայի է ենթակա միայն հորատհրապարակների տարածքը: Հորատման ընթացքում կառուցված ճանապարհները ռեկուլտիվացիայի չեն ենթարկվի, դրանք կօգտագործվեն հետագայում հանքավայրի շահագործման ընթացքում:

Աշխատանքների կատարման ժամկետները սահմանված են՝ 2023թ. 2-րդ եռամսյակից մինչև 2024թ. 4-րդ եռամսյակը:

Երկրաբանական ուսումնասիրության ընթացքում վերցված բոլոր նմուշների լաբորատոր հետազոտություններն իրականացվելու են «Անալիտիկ» ՓԲԸ-ի կենտրոնական լաբորատորիայում:

Խախտված տարածքների, որոնք ենթակա են վերականգնման, հողաբուսաշերտի ծավալները գնահատվում են՝ 128մ^3, խախտված հողաբուսաշերտի վերականգնման աշխատանքների համար անհրաժեշտ ծախսը կկազմի՝ 384 000 ՀՀ դրամ:

Համաձայն հայտի ուսումնասիրության ընթացքում թափոններ չեն առաջանալու, քանի որ առաջացած հողային շերտը և մակաբացման ապարները կուտակվելու են անմիջապես փորվածքների հարևանությամբ, պահվելու են կարճ ժամկետով և աշխատանքների ավարտից անմիջապես հետո օգտագործվելու են խախտված տարածքների հարթեցման համար:

Գործունեության իրականացման ընթացքում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ խմելու և տեխնիկական նպատակներով, ջուրը կբերվի ջրօգտագործման պայմանագրերի համաձայն, մոտակա այն համայնքից, որն ունի տեխնիկական ջուր:

Համաձայն նախնական հայտի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների հնարավոր բացասական ազդեցությունները կապված են լինելու օդային ավազանի, ջրային և հողային ռեսուրսների հնարավոր աղտոտման, բուսական և կենդանական աշխարհի, լանդշաֆտային ամբողջականության պահպանման հետ: Ուսումնասիրության ընթացքում ջրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենալու, քանի որ գրունտային ջրերը տեղադրված

են խորը հորիզոնների վրա և երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն լինելու: Դաշտային աշխատանքների կարճատև լինելու հանգամանքով պայմանավորված՝ մեխանիզմների շահագործումից առաջացած վնասակար ծխագազերի, հորատման ընթացքում առաջացող արտանետումները և աղմուկի մակարդակը չեն գերազանցելու նորմատիվային փաստաթղթերով ամրագրված սահմանային թույլատրելի նորմերը: Վտանգավոր թափոնների (մեխանիզմների յուղեր, քսայուղեր, մետաղաջարդոն, անվադողեր) կուտակումներ չեն առաջանալու: Բուսական և կենդանական աշխարհի վրա հնարավոր ազդեցությունները լինելու են աննշան, քանի որ հորատման հարթակների կառուցման և փորձնական հանույթի կատարման աշխատանքները կատարվելու են բուսական ծածկույթից զուրկ տարածքում, կենդանիների և թռչունների բնադրավայրերից հեռու:

Նախնական գնահատման հայտով նախատեսվում է օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից, բուսական և կենդանական աշխարհի պահպանման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր և մոնիթորինգ.

- փոշենստեցման նպատակով՝ ջրցան,
- օգտագործվող տրանսպորտային միջոցների վրա արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում,
- կեղտաջրերի հավաքում դաշտային հորատիպ զուգարանում,
- հողի բերրի շերտի, պահեստավորում, ծածկում (հողաշերտով), աշխատանքների ավարտից հետո օգտագործում՝ լանդշաֆտի վերականգնման նպատակով,
- անմիջապես աշխատանքների կատարման վայրում նյութերի (թափոնների) բաց այրման արգելում,
- յուղերի անվտանգ պահեստավորում և փոխադրում, վառելիքի մնացորդների հանձնում լիցենզավորված կազմակերպությանը,
- մթնոլորտային օդի աղտոտվածության պարբերաբար հսկողության սահմանում, արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումների կատարման միջոցով (շաբաթը մեկ անգամ),
- աշխատանքների ավարտից հետո խախտված տարածքների ռեկուլտիվացիայի իրականացում, հետ փռված ապարների փխրեցում, ինչը թույլ կտա ապահովել նոսր բուսականության արագ վերարտադրությունը և վերականգնել բնական լանդշաֆտային պայմանները,
- մեքենաների և սարքավորումների տեխնիկական վիճակի հսկում՝ տարեկան մեկ անգամ,
-արտակարգ իրավիճակներին համապատասխան պատրաստվածության ապահովում և այլն:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության աղտոտման կանխարգելման մոնիթորինգի համար նախատեսվում է 100000 ՀՀ դրամ:

Պատճառաբանական եզրահանգումներ. Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է տարածաշրջանում շինարարական նյութերի պահանջարկի բավարարման նպատակով: Երկրաբանահետախուզական աշխատանքների (դաշտային աշխատանքներ) կատարման ժամանակահատվածը լինելու է կարճատև և սեզոնային, ուստի ուսումնասիրության ընթացքում ազդեցությունները լինելու են ժամանակավոր և տեղային:

02543163
ՓՈՐՁԱՓԱՐՏԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Փորձաքննության ընթացքում հայտը շրջակա միջավայրի նախարարության դիտողություններով ու առաջարկություններով լրամշակվել է: Օրենսդրությամբ սահմանված կարգով Շիրակի մարզի Ախուրյան համայնքի, Հացիկ բնակավայրի ղեկավարի նստավայրում իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինը և հանրությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, արտակարգ իրավիճակների, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն:

Փորձաքննական պահանջներ

- Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում պարբերաբար իրականացնել հողի, օդի, ջրերի, կենսաբազմազանության մոնիթորինգ, արդյունքները ներառել մոնիթորինգի պլաններում:
- Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում, անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական բոլոր նորմերը:
- Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման պահանջով, գործունեության իրականացման ընթացքում պատմամշակութային արժեք ունեցող կամ հնագիտական շերտերի հայտնաբերման դեպքում, անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները՝ տեղյակ պահելով ոլորտը կարգավորող լիազոր մարմնին: Աշխատանքները վերսկսել լիազոր մարմնի թույլտվությունից հետո:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԼԵՆՃԱՆՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Շիրակի մարզի անդեզիտաբազալտների «Հացիկ-1» տեղամասում 2023-2024թթ. ընթացքում կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Ա. Վարդանյան